



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 սեպտեմբերի 2022 թվականի N 1378 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը և 2014 թվականի օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում ձեռք բերված գույքի շահագործումը ծրագրի պահանջներին համապատասխան ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի, Լոռու, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի համապատասխան համայնքներում (բնակավայրերում) ստեղծված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին ժամանակավոր պահատվության հանձնված՝ 1177 468 910 (մեկ միլիարդ հարյուր յոթանասունյոթ միլիոն չոր հարյուր

վաթսունութ հազար ինը հարյուր տաս) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կոոպերատիվներին՝ համաձայն N 1 հավելվածի, կոոպերատիվների կանոնադրական խնդիրներին համապատասխան տվյալ համայնքում անասնապահության զարգացման նպատակով օգտագործելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ժամանակավոր պահատվության հանձնված՝ 50 660 800 (հիստուն միլիոն վեց հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կազմակերպությանը՝ համաձայն N 2 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

3. «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը ժամանակավոր պահատվության հանձնված՝ 60 726 200 (վաթսուն միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար երկու հարյուր) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն կազմակերպությանը՝ համաձայն N 3 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

4. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին ժամանակավոր պահատվության հանձնված՝ 25 563 000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն հիմնադրամին՝ համաձայն N 4 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

5. «Անասնաբույժների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը ժամանակավոր պահատվության հանձնված՝ 1 485 000 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար) դրամ սկզբնական արժեքով պետական սեփականություն հանդիսացող գույքը նվիրաբերել նույն հասարակական

կազմակերպությանը՝ համաձայն N 5 հավելվածի՝ բացառապես գույքի նպատակային նշանակությամբ օգտագործելու և հետագայում չօտարելու պայմանով:

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չորսամսյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներում նշված գույքի նվիրաբերության մասին պայմանագրերի կնքումը՝ համապատասխան համայնքների, կոոպերատիվների և կազմակերպությունների հետ և պահատվության պայմանագրերի լուծումը.

2) սույն որոշման NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածներում նշված գույքի հանձնմանը նդունման գործընթացի իրականացումը:

7. Սույն որոշումից բխող գրանցումները և հաշվառումներն իրականացնել որոշման 6-րդ կետի առաջին ենթակետով նախատեսված պայմանագրերի կնքումից հետո՝ երկամսյա ժամկետում:

8. Նվիրաբերվող գույքի նվիրաբերության պայմանները սահմանել նվիրաբերության մասին պայմանագրերում՝ ծրագրի պահանջներին համապատասխան՝ դրանցում նախատեսելով, որ գույքը նվիրաբերության պայմաններին անհամապատասխան օգտագործելու դեպքում նվիրաբերողն իրավունք ունի պահանջելու նվիրաբերության վերացում:

9. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածում նշված գյուղատնտեսական տեխնիկայի և բեռնատար ավտոմեքենայի պետական հաշվառումն իրականացվում է համապատասխան կոոպերատիվի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան